

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

54^{րդ} ՏԱՐԻ, Զ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 35

3 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1905

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Բարեգործության ոգին	ԽՄԲԱԳՐԱԿԱՆ
Աբեղյան ջգն յԱրմառ (Կցկտուր յեռասակներ)	ՎԱՀԱՆ ՎՐԴ. ՊԱՐՏԻԶԱԿՅԻ
Մովսիսին մոտ (Բանաստեղծություն)	ԵԴ. ԳՕԼԱՆՃԵԱՆ
Սրբիս երգերը » »	ՀՐԱՆՏ ՆԱԶԱՐԵԱՆ
Բարոյական առողջաբանություն	ՏՈՔԹ. Տ. ԱԼԼԱՀՎԵՐՏԻ ՈՐԴԻ
Առաջինության մեջանակները (Թարգմ.)	ԶԻՅԹԷ-ՍԱՐԱՅ
Բուրասան	ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Օրուան Նոթեր

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթաբերթի տարեկան բաժանորդագրին է Կ. Պոլսոյ համար ԲԱՆԱՆՈՆ ղՐՕ. եւ գաւառներուն համար յիսուն ղՐՕ., կանխիկ վճարելի: Արտասահման՝ 12 Զրանք կամ 5 բուլլի: Թղթաստրական ծախքը Խմբագրության վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրու-
թիւն չընդունուի: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ
հրատարակ կ'ելլէ ամեն շաբաթ առտու:

Զի հրատարակուած ձեռագիրները ետ չեն դարձուի:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասչելի պայ-
մաններով:

Զեո՛րէ կը ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ
Հասցէ

در علیّه غلطه (ماحیس) غزیه سی اداره سی

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Ղալաթիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

Գործարարական

Թելը, որ այսօր գրեթե բոլոր ժողովրդաց գլխավոր ըմպելին դարձած է, այնքան բաղաժաթիլ առատակներ ունի որ, որդարեւ գործածողներուն համար բաւական դժուար է լուր քննութիւն մը ընել: Այդ առատակներէն մասնք նշանաւոր են իբր Թորօտհամ եւ քողորարար, մասնք ալ թէեւ նոյնքան Թորօտհի համ ու հոտ չունին, գերազանց են սակայն իբր կաշուերի եւ զօրացուցիչ. վերջապէս իւրաքանչիւր թէյ իր ուրոյն յաղթութիւններն ունին որոնք զինքը կը զանազանեն ուրիշ, առատակներէ:



Սակայն հալ թէյ մը, որ այդ յաղթութեանց ամէնէն կարեւորները կը միացնէ իր վրայ. այսինքն՝ գոյն, համ-հոտ եւ մանաւանդ կաշուերի եւ զօրացուցիչ անզուգական ազդեցութիւն մը, եւ այդ թէյն է ճաբոնի քիյը, որ այդ յաղթութեանց շնորհիւ կը յարմարի ամէն տարիքի ու կազմութեան, ամէն կլիմայի եւ եղանակի եւ ամէն ճաշակի:

Յալութեան եւ Իսագուլեան քիյի մեծ վաճառատունը, իր բաղաժաթիլ յաճախորդաց ծառայութիւն մը մատուցանելու համար, այս անգամ մեծաքանակ ներածած է ճաբոնական զուտ թէյ մասնաւոր եւ դսկական առաքելութիւն ու կը հրաւիրէ օգտուել այս առիթէն բոլոր աշունք, որ կը փափաքին ունենալ թէյ մը:

Համով, հոսով, առողջապահիկ եւ կազդուրիչ:

Սոյն վաճառատան մէջ կան նաեւ հնդկական, չինական, Սէյլան եւ ճապոնական առատակ թէյեր:

10 - 10

Ուսադուրիւն մարգարի

ՏՈՔԹ. Բ. ԷՄԻՐՁԷ

Հանրածանօթ մանուկագուր եւ կնիւտագուր (gynécologue), Տօքթօր Էմիրզէ որ 15 տարեւան գործունէութեամբը մեծ համբաւ ստացած է, կը ծանուցանէ յոր. զայ յաճախողներուն թիւ բնակարանը փոխադրած է Պէքեար փողոց թիւ 18. Բաց ի վերայիշեալ իւր մասնագիտութենէ կը բաւժէ նաեւ նորագոյն մէթօտներով շղային եւ հօգեկան ու երեւակայական ամէն առատակ հիւանդութիւնները, ինչպէս նէվրոսթէնի եւ tic անուանուած աչքի երեսի եւ ուսերու ագեղ եւ աղամայ շարժումները եւ դաշտանի դադարումէ յետոյ եկած շղային խռովումները եւ երիտասարդական մօլիքները, ինչպէս նաեւ գինեմօլիքը, մօրիֆնամօլիքը եւայլն:

Կիրակիներէն զատ ամէն օր կէսօրէն սկսեալ մինչեւ երեք ժամ հիւանդ կընդունի, եւ օւրբաթ օրերը ձրիաբար կը դարձանէ վկայեալ աղքատները: 10—10

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Գաղսնիք գեղեցկութեան. Առողջութեան եւ Երկայնակեցութեան. Բրոք. Պաւլէյնրաւ, Թարգմանեց Անգլիերէնէ, Սոմաւել Գ. Վարժապետեան: Կ. Պոլսո, Տպագրութիւն, Թ. Մատթէոսեան, 1905:

Հետաքրքրաշարժ, հրապարակ. զօր-սալի եւ ամէն տեղի ու հասակի յօժ պիտանի գործոյկ մը 248 երեսներէ աղկա-րեալ: Թղթակագոյն գինն է 8 դահ. 1 Լաթակագոյնը՝ 10 դահ. 10է աւելի գնաչեքու 15 առ հարիւր եւ 50է աւելի գնաչեքու 20 առ հարիւր գնաչեքու, Վաճառ-ման կեդրոնաւորներն են Թ. Մատթէոս, եւն թղթավաճառանոցը եւ Պալենց գրա-տունը:

10 - 10



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը սեննայ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղաուկի աղբիւր մըն է։

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Ր

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի միացումայն մեքենաներ կը գտնուին։

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ ամէն ոք Սինկէրի մեքենաները կը գնէ։

Սինկէրի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկէր Ընկերութեան վաճառատանց մէջ՝

ՀԱՅԹԱՅԹԱՆ
ՄԱՍՆԱԳՆՈՒԹՅՈՒՆ

- | | | |
|----------|---|--|
| ԲՆԲՍ. | } | 1. Մեծ փողոց, Պօն Մառէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին՝ |
| | | 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱՎ. | } | 1. Սինկէր խան, Թիւնէլին ետեւը. |
| | | 2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | } | 1. Սուլթան Համամ, Թ. |
| | | 2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13. |
| ՍԱԻԿՍՏՐ | | 2արշը Պօյու, Թ. 120. |

Դասերը եւ նորոգութիւնք ձեռքի.

Կատարելաբաւարարութիւն։

Մասնանկիւր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ։

Սինկէրի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղօղլուի տունը։

ՀԱՉԱՐԱՐՈՐ ՏԱՐԻՆԵՐ

Աս նոր գիւտի Օրուան հետ համեմատելով խիստ քիչ կարեւորութիւն մը ունին: Խոզառանձ (սըրաճա) և արեան տկարութիւն և միւս արեան քեշութեան հետեւանքները, որոնք մարմնոյ տկարութեան նշաններն են, այս պիտի աղետները դարմանող և բժշկող դեղ մը կրնայ միայն ամենակարեւոր և ամենաքանչեւի բան մը համարուիլ: Ահաւասիկ հիմայ աշխարհիս մէջ կայ դեղ մը բոլոր այն ախտերու դէմ:



SCOTT'S EMULSION

որ Առեգական միջնորդութիւն մէջ դառնաւ փոշիները չորցնելուն պէս, նոյն հիւանդութիւնները կը բժշկէ:

ԲԱԳՕԹԻ ԲԵՂԵԴՐՈՒԹԻՈՒՆ

նաև մարդկային մարմինը շրջապատած բոլոր ախտերը հեռու կը վերնառէ:

ԲԱԳՕԹԻ ԲԵՂԵԴՐՈՒԹԻՈՒՆ

Արեան տկարութիւն ու եղբայրացի կեանքը կը փրկէ:

Հիշերու վրայ ասոր ուշադրութիւն ընել պէտք է:

Բոլոր բեղմնաբերութեան և բեղմնաբերութեան ծախսեր:

23

ՍՊԱՌՄԱՆ ՄՕՏ

Կ. Ա. ՈՍԿԵԱՆ

Ա. Ռ. ՉԵՌՆ ԲԱՌԱԳԻՐՔ

Հայերէն - Գաղղիերէն

2րդ ՏՊԱԳՐՈՒԹԻՆ

Կը պարունակէ արեւի քան 25,000 քառ, ոճ, եղն, գործածական քառերու ընտիր հաւաքածոյ մը,

Պիտանի ամէն գործի մարդու — Անհրաժեշտ ամէն դպրոցականի

ԳԻՆ ՄՐԱՅԸ ԵՐԵՎԱՆԻ ԱՄՍՈՑ ՀԱՄԱՐ.

Քառթոնէ կազմ 25 դր., Ընտիր լաթակազմ 27 դր., Կաշեկազմ 32 դր.

1906 Յունիսի մէկէ վերջ երէտ տակաւին անվաճառ օրինակներ մնացած ըլլան, գիններուն վրայ զգալի յաւելումով մը միայն պիտի վաճառուին:

ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻ: Յ. ՄԱՏԹԵՈՍԵԱՆ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՆՈՅ

27, Ֆինանսներու Ամերիկան խան, Կ. ՊՈԼԻՍ

ԿԸ ԳՏՆՈՒԹԻ ԲՈԼՈՐ ԳՐԱՎԱՃԱՌԱՅ ԲՈՎ

ՄԱՍԻՆ

54^ր ՏԱՐԻ, 2. ՇՐՋԱՆ



ԹԻ 35



3 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1905

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՈԳԻՆ



(ԽՄԲԱԳՐԱԿԱՆ)



Կրօնային-բարեգործական պարզ հանդէսով մը տօնուեցաւ Խասգիւղի Գալֆաեան Որբանոցին հաստատման տարեդարձը, անցեալ կիրակի օր, Ս. Պատրիարք Հօր նախագահութեամբ: Օրաթերթերը մանրամասնաբար հրատարակած ըլլալով նկարագրութիւնը, աւելորդ կը համարինք անդրադառնալ անոր:

Իր պարզութեանը մէջ նշանակալից էր սակայն այդ հանդէսը, որ կնոջական անձնութեան ու բարեգործելու մէջ յարատեւութեան ոգին կը պատկերացնէր, այդ Հաստատութիւնը հիմնուած ըլլալով բարեյիշատակ Սրբուհի մայրապետին ձեռքով, ու շարունակուած իր յաջորդ մայրապետներէն, և հիմակ ալ իրեն խնամակալուհի ունենալով ազնուասիրտ Տիկիններու խումբ մը որոնք ո՛չ միայն փրկեցին Որբանոցը փակուելու մօտ գտնուող նիւթական ձախող վիճակէ մը, այլև ստանձնեցին անոր վերաշինութիւնը՝ բարերարներու օժանդակութեամբ:

Անցեալ տարի այս միջոցիս տօնուեցաւ Գալֆաեան Որբանոցին նորակառոյց շէնքին բացումը, և անկէ ի վեր՝ խնամակալութիւնը և Գիւտինէ մայրապետ իրենց բոլոր ջանքը կեդրոնացուցած են անոր ներքին յառաջդիմութեան, թէ՛ ուսումնական և թէ՛ ձեռարուեստի ճիւղերուն մէջ, խղճամիտ հոգածութեամբ մը նաև մատակարարական գործին: Այս մարդասիրական բոլոր ջանքերն ու աշխատութիւնները կը կատարուին՝ Վեհ. Կայսեր բարձր հովանաւորութեան ներքեւ, զոր վայելելու բարեբաղդութիւնն ունի նաև

Գալֆաեան Որբանոցը: Ն. Կ. Վեհափառութիւնը՝ Որ մեծագոյն Բարերարն է այդ Հաստատութեան՝ օրական հացի և միսի պարէնին շնորհումովը, այս անգամ ևս բարեհաճեցաւ իր Կայսերական բարձր գոհունակութեան մէկ նոր հաւաստիքը շնորհել, հարիւր ոսկիի պարգեւով մը՝ սանուհեաց կողմէ պատրաստուած հաւատարմական ու երախտագիտական Ուղերձի մը և նրբահիւս գորգի մը յոտս Կայս. Գահոյից մատուցման առթիւ: Կայս այս պարգեւն, ինչպէս բերկրութեամբ ծանուցին օրաթերթերը, յանձնուած է Ս. Պատրիարք Հօր որ այս առթիւ յանուն սանուհեաց և խնամակալութեան, երախտագիտական Ուղերձ մը մատոյց ի Կայս. Պալատ:

Կայսերական այս բարձր շնորհներէն քաջալերուած՝ խնամակալութիւնը կը կրկնապատկէ իր ջանքերը, նորամուտ չըջանին մէջ յառաջդիմական նոր և զգալի զարկ մը տալու համար Որբանոցին, զոր իրենց պարբերական այցելութեամբ աչքի առջև ունին միշտ Տիկնայք՝ Սրբուհի Կ. Գարակէօզեան (Ատենապետ), Տիկին Իսկուհի Կ. Փափազեան (Ատենադպիր), Տիկին Վասիլուհի Ն. Գարակէօզեան (Գանձապետ), և Տիկին Լիլիզա Տէր-Յարութիւնեան, ինչպէս նաև իրենց բազմադիւն անդամակիցն ու օժանդակը՝ Բարթող Էֆ. Թէլեան որուն, կիրակի օրուան հանդէսին մէջ, յանուն խնամակալութեան կարգացած տեղեկագիրն հրատարակելով, կատարեալ գաղափար մը տուած պիտի ըլլանք այդ Հաստատութեան բոլոր

համակրողներուն՝ անոր վիճակին վրայ: Ահաւասիկ այդ տեղեկագիրը որ ուղղուած է Ս. Պատրիարք Հօր. —

«Դաւթեան Որբանոցի Տիկնանց Խնամակալութիւնը մեծ գոհութեամբ կը տեսնէ որ այս բարեգործական հաստատութիւնն՝ արդէն արժանացած Օգոստոսի առ կայսեր բարձր պաշտպանութեան, և՛ առարկայ՝ Ձեր հայրական խնամքին, հետզհետէ առարկայ կը դառնայ նաև ընդհանուր համակրանքի եւ մտադրութեան, ինչպէս էր երբեմն, եւ ինքն ալ քաջալերուած աստի, առաւել եւս կը հետապնդի, ոչ թէ միայն անոր մատակարարութիւնը կանոնաւորելու, այլ և ներքին վիճակը դնելու այնպիսի ուղղութեան մը մէջ, որ եղած զոհողութիւնները բեղմնաւորին եւ հաստատութիւնը պատասխանէ լիովին՝ իր կաղմակերպութեան նպատակին:

«Բարեխիշատակ հիմնադիրն, Սրբուհի մայրապետ Դաւթեան, հաստատած է այս տեղ՝ չէ թէ առժամայն պատասպարան մը որբունիներու, որ անոնց մակուիթիւնը պաշտպանէ միայն՝ եւ յետոյ վտարէ ի բաց, երբ չափահասութեան տարիքը թեւակոխեն, այլ հիմնած է ընտանիք մը՝ որը ու անտէրունջ աղջիկներու, իր կտակադրով տէր կանգնելով զանոնք որբանոցին գոյլից և հասոյթներուն, եւ իրաւունք տուած է վայելելու զայնս եւ մնալու այս յարկին ներքեւ, մինչեւ որ դայ առիթը՝ ամուսնութեամբ, այլուր պաշտօնակալութեամբ եւ կամ ուրիշ որդեգրուելով՝ մեկնելու աստի:

«Այս կարգադրութիւնը բարեգործութեան լայն և լուսամիտ ըմբռնում մը կ'ենթադրէ՝ և պատիւ կը բերէ առաքինի մայրապետին զգացումներուն ու գաղափարին. անշուշտ շատ դառն և հակադրական բան մը պիտի լինէր ժամանակաւոր խնամարկութենէ մը ետքը՝ որբունիներն իրենց դեռափութիթ հասակին մէջ լքանել անպաշտպան, խաղաղիկ՝ գետնաքարէ փորձութեանց, որ կը սպասեն դուրսն իրենց, բայց միւս կողմէ՝ պէտք չէ նաև որ ստիպուած լինին անոնք՝ դատարկասուն ու ապարդիւն կեանք

մ'անցնելու հոս ցվերջ, անօգուտ իրենց և ուրիշին, և զբաւելու շարունակ՝ իրենց դուրս գաբախտ նորեկ քոյրերուն տեղը, այլ անհրաժեշտ է՝ որ պատրաստուին ընկերական վիճակի մը, և պահանջուած պայմաններուն համաձայն՝ ստանան ինչ որ կարելոր է՝ կացութիւն մ'ունենալու, զիրենք հոգալու և վերջապէս ընտանիքին բեռ չըլլալու համար, նոյն իսկ եթէ մնալ հարկ լինի:

«Որբանոցին ներքին ուղղութիւնը սահմանուած է այս արդիւնքը ձեռք բերելու համար և այս ուղղութեան հիմն է՝ ապահովել՝ սանուհիներուն մտաւոր ու բարոյական կրթութիւնն, իրենց յարմար ու օգտակար մէկ մէկ արհեստ սովորեցնել, ընտանեկան կեանքի՝ աշխատութեանց ընտելացնել, անոնց հոգին աստուածապաշտութեամբ, կրօնական առաքինութեամբ, և բարոյականի ողջամիտ սկզբունքներով տոգորել, և այսպէս հասցնել՝ ուսումով զարգացած, արհեստով օժտուած, նկարագրով զօրացած, բարեկիրթ, բանիւրուն, համեստ ու շահածուկ աղջիկներ, կարող իրենց անձին տէր լինելու եւ ընկերութեան օգտակար դառնալու: Ահա, այս է Որբանոցիս ուղղութիւնն, որու մէջ կ'երեւին քովէ քով դպրոցն, արհեստանոցն եւ ընտանիքը: Դպրոցին մէջ սանուհիները կ'ուսանին մայրենի լեզուն, կրօնքը, եկեղեցւոյ պատմութիւնն ու երաժշտութիւնը, թուաբանութիւն, գծագրութիւն ու նկարչութիւն, և մասնաւոր կարգադրութեամբ մ'ալ այն սանուհիներն, որ ուսման ընդունակ եւ զարգացման տրամադիր են, ու ապագայ կը խոստանան, կը սովորին ֆրանսերէն լեզուն եւ ուրիշ կարեւոր գիտելիքներ: Արհեստանոցին մէջ կ'ուսանին կար ու ձեւագիտութիւն, մասնագէտ ուսուցչուհի մը միջոցաւ, կը սովորին ու կը գործեն ձեռարուեստներ, որպիսիք են տիւալ ոսկեթել, սիւղէնի պոստէ, աժուռ, քարօ եւ վերջապէս ասեղնագործութեան զանազան ճիւղերը: Փոքրերն ալ անմասն չեն մնար, կը հիւսեն գուլպայ, կը լինեն թաշկինակի եզրեր եւ կը բանին քօշէ: Արհեստանոցն արտադրած է մինչեւ ցարդ քանի մը հարկը

կտոր նրաճաշակ եւ դեղահիւս ձեռագործ-
ներ, որ սահմանուած են ի վաճառ հանուե-
լու: Արհեստանոցը քանի մը նոր կատարե-
լագործութիւն պիտի ստանայ և այնուհետեւ
պիտի կրնայ յանձնարարութիւններ ընդու-
նիլ և գործադրել անթերի: Իսկ ընտանիքին
մէջ՝ սանուհիները կը հոգան տանը մաքրու-
թիւնը, կը կատարեն ձերմակեղէններու
լուացքը, կը կարեն իրենց ամէն հագուստ-
ները, կ'աշխատակցին խոհարարին՝ կերա-
կուրներու պատրաստութեան համար, և վեր-
ջապէս ի գործ կը դնեն առանին ամէն սպա-
սարկութիւնները, որոշեալ ժամերու մէջ
փոփոխակի կարգով, իրենց տարիքին ու
կարողութեան ներած չափով, ճշդապահու-
թեամբ եւ սիրայօժար:

«Իսկ ամէնուն կրթութեան, յառաջացման
ու հանգստին հոգն ու խնամքը կը տանի
Որբանոցին պարկեշտասուն Մայրը, խորհր-
դակցութեամբ ու աշակցութեամբ դպրոցի
բաղմբարխտ Տնօրէնին և իրեն գործակից
ունենալով երկու անձնուէր՝ Քոյրերը, սա-
նուհիներու չափահասներէն ընդունուած ժիւ-
օգնականներն և ձեռնհաս ուսուցիչները:
Ձեր Սրբազնութեան կողմէ ալ Տիկնանց
Խնամակալութիւնը կը հսկէ հաստատու-
թեան վերեւ, և մեծ ուշադրութիւն կ'ընծայէ
որ պահուի անաղարտ այս յարկին սրբու-
թիւնն, ինչպէս անաղարտ են հոս պատըս-
պարուող մանկուհիներու կոյս հոգիներն եւ
զերծ մնայ հաստատութեան պատիւն ամէն
արատէ»:

Տիկնանց Խնամակալութեան կողմէ թէլ-
եան էֆ.ի կարգացած այս տեղեկագիրը, իր
ամփոփ ձեւին տակ, պատկերացումն է Գալ-
փանի Որբանոցի արդի վիճակին, անոր
նուիրուած աշխատութեան, ձեռք բերուած
արդիւնքին, եւ բարեսէրներու նպաստ-
ներուն խղճամիտ մատակարարութեան:
Ամէն անոնք որ առիթ ունենան ան-
ձամբ այցելել այդ Հաստատութիւնը, պիտի
տեսնեն թէ ո՛րքան համեստ է Խնամակա-
լութիւնը իր համարատուութեանը մէջ եւ
թէ գրաւորապէս ներկայացուցածէն ի՛նչքան
աւելի աչքի կը զարնէ նուիրուած խնամքը՝
իր պողաբերութեամբ: Որբանոցին մէջ ու

անոր շուրջը, ամէն ինչ ի յայտ կը բերէ բա-
րեգործութեան ոգին, իր ամէնէն ազնիւ ու
ցայտուն ձեւին տակ:

Եւ այս գիտակցութիւնը կը բաւէ բարե-
րարներուն, Խնամակալուհիներուն ու Մայ-
րապետին միակ գոհացումը ու բարոյական
վարձատրութիւնը ըլլալու որ հոգեկան հըր-
ձուանք մըն է, եւ գրգիռ տալու իրենց
անձնուէր ջանքերուն շարունակութեան ու
յարատելութեանը:

Ս Ր Տ Ն Ս Ե Ր Գ Ե Ր Ը

Գ Ե Ղ Ե Ց Կ Լ Թ Ի Լ Ն

Վարդ մը տեսայ փայլուն, աղւոր,
Բիշ վերջ, աւա՛ղ, խամբեր էր:
Արշալոյս մը տեսայ չըքեղ,
Երեկոյին մարեր էր:

Գեղեցկութիւնը, պա՛շտելիս,
Վաղանցուկ է, կը ցնդի.
Ինչ որ յարգի է մանաւանդ,
Գեղեցկութիւնն է սրտի:

Վարդ մը տեսայ փայլուն, աղւոր,
Բիշ վերջ, աւա՛ղ, խամբեր էր.
Արշալոյս մը տեսայ չըքեղ,
Երեկոյին մարեր էր:

Գ Ե Տ Ա Կ Ը

Գետակի մը պէս յորձանուտ,
Կը հոսի սէրըս հեւալով.
Դաշտերուն մէջ, հէ՛ք թափառիկ,
Շրջան կ'ընէ բաղամահով:

Կը հոսի ան, ո՛վ գիտէ ուր,
Վաղք մը իր կեանքը անդադրում.
Ապառաժուտ ժայռի վրայէն,
Կ'անցնի կ'երթայ տրտճւմ, տրտճւմ,

Ուր որ ափ մը կայ հիւրընկալ,
Պաաառ մը հող մենաւորիկ.
Փոքրիկ լիճ մը կազմէ հունա,
Ու ծաղիկներ տայ աղւորիկ...:

ՀՐԱՆՏ Տ. ՆԱԶԱՐԵԱՆ

ԱՐԵՂԱԶԱԳՆ ՅԱՐՄԱՇ

(ԿՅԿՏՈՒՐ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ)

Առաւօտ է, շատ կանուխ, արշալոյսն սկսած է հազիւ նշուիլ: Ձէնիկ մը կը լսուէր Արեղաթաղի սրահին մէջ, մեղմիկ ողորմուկ ձէնիկ, հին ողբերգէ քաղուածք մը:

Ուռկանաւ մեղաց:

Որսացաւ զանձն իմ:

Տէր, ողորմեա, Տէր, ողորմեա:

Շնորհալիի ապաշխարութեան երգերէն հատուած մըն է այս, կ'ըսէր Վահան վարդապետ, որ նոր արթնցած էր, սթափ այս սրտառու ձայնէն: Մեռել կայ արդեօք. — ոչ: Ո՛հ, մի գուցէ հոս ալ մեղաց ուռկանէն բռնուած մեղաւոր մը բերուած և հիմա զգաստացած զղջացած՝ այս հեկեկը կ'արծըկէ:

Հազիւ այս խօսքն արտասանած էր Վահան վարդապետ, անա՛ շէնքով շնորհքով մէկը, մօրուքով թաւ, աչքով վառվռուն, տեսքոտ ծիծաղկոտ դէմքով մէկը, որ սենեակէն ներս մտնելուն պէս խնի պէս բացազանչեց:

«Գիտէ՞ք, ես ո՞վ եմ»:

— Ով կ'ուզէք ան եղէք:

«Այո՛, հազար տարի առաջ Շնորհալի ինծի համար երգած է այս երգը: Աշխարհային փորձութիւններէ պաշարուած ու խածատուած՝ փախայ, հոս ապաստանեցայ»:

— Յետո՛յ:

«Հոս ալ մեղաց ուռկանէն բռնուեցայ. — վարդապետ եղայ»:

— Թող չըլլայիր:

«Վարդապետ ըլլալս հոգ չէ. այլ շուշտակ վարդապետ ըլլալ, ծաղր ու ծանակ ըլլալ: Այս է ծանրը, անտանելին»:

— Շուշտակ վարդապետ. հոգդ է այդ: Ամենուն՝ որոնք շուշտակութիւնդ երեսիդ կը զարնեն՝ դուն ալ անոնց երեսին չպուռա՛ս. «ձեր կաթողիկոսն ալ շուշտակ վարդապետութենէ եպիսկոպոս ու կաթողիկոս եղաւ»:

«Բայց կի՛նս...»

— Ի՛նչ, հիմա նորէն կնի՛կ կ'ուզես:

«Ո՛չ, միայն թէ սրտիս տէրտ եղած է թէ ի՛նչու կի՛նս «Աչահար» մեռած ըլլայ»:

— «Աչահար»ն ի՛նչ է:

«Դուք հայերէն չէ՞ք գիտեր, աչահար, կի՛նս նազարի եկաւ, ինծի պէս ըռինտուկ մատղըշուկ շահածուկ, գիտածու տիրացու էրիկ մը ունենալուն համար:

— Աստուած լուսաւորէ հոգին: Կենդանի աղօթքը բարեխօս ըլլայ: Բայց դուք ինէ հիմա ի՛նչ կուզէք:

«Կ'ուզեմ գիտնալ թէ իմ հալս ի՛նչ պիտի ըլլայ հոս»:

— Ամենուն հալը ինչ որ պիտի ըլլայ վանքին մէջ, այն թող ըլլայ քուկդ ալ:

«Ի՛նչ. հիմա այս տղեկներն որ հոս հաւքուեր են, օր մը վարդապետ ըլլան նը, ես ի՛նչ պիտի ըլլամ»:

— Եպիսկոպոս...:

«Եպիսկոպոս. ուրեմն այս աւետիսը տալու համար հոս եկեր էք, Բարի եկեր էք, զինիդ օղիդ ինէ: Խմեցէք, ճնկեցէք. կլկեցէք, զինովցէք. անուշ ըլլայ: Եպիսկոպոս»:

— Այո՛, եպիսկոպոս: Բայց...:

«Խօսեցէք»:

— Բայց եպիսկոպոս ըլլալու համար ոչ թէ նիհարուկ ու վատուծիկ, վտիտ, ճուղած սմբած, տոսախի պէս բարակուկ, ջրամոյն մուկի պէս ճրճկած ըլլալու է, այլ զիրուկ հաստկեկ լեցունկեկ թաթաղուն զեղուն շարժուն մեծափոր պարարտամարմին ըլլալու է:

«Չըսե՞ս որ սագի պէս բան մը ըլլալու է»:

— Այո, «խաղ» մը, արդէն անունով ալ այնպէս է, վասն զի Արսէն անունդ Ղպտի երէն է, որուն հայերէնն է Արսէն:

«Չըսե՞ս որ զիս ձեռնադրող Սրբազանն ալ ատոր համար անունս Արսէն դրեր է:

— Յայտաւորքին մէջ չե՞ս կարդացեր որ հին ատեն ճգնաւոր մըն էր՝ ան, որ սագ արծելուն համար Արսէն կոչուեցաւ:

«Ես Յայտաւորքին մէջ միշտ Աղուաշ Սիմոն կը կարդամ»:

— Սա խեղանոր «որ փուքս արձակէր

ընդդէմ կռոց» աստուածահաճոյ բան մը ըրած ըլլալու համար :

«Այլ սակայն Աղուաշ Սիմոն արքայութեան արժանացաւ, իսկ Արսէնդ...» :

—Փառաւորեցաւ, վասն զի օր մը Ղըպստիններուն կաթողիկոս եղաւ :

«Ի՞նչպէս» :

—Վասն զի ամէն օր, գիշեր ցերեկ սազի պէս լողալով հետզհետէ գիրացաւ ան, պարտացաւ ստուարացաւ լայնացաւ, փքացաւ և ... չէ՞ք գիտեր որ մինչև ցայսօր Ղպտիններուն մէջ օրէնք է որ ան կ'ըլլայ կաթողիկոս, որ պոյով պօսով խոշորիկեկ լայնիկեկ մեծղի մօրուանի և գիրուկ է :

«Ուրեմն ես ալ եպիսկոպոս ըլլալու համար լողալու եմ» :

—Լողալու պէտք չկայ, տու կ'ընես :

«Տուչն ի՞նչ է» :

—Տաշտի մը մէջ մօրէմերկ կը մանես ամէն գիշեր ցերեկ, վերէն ջրամանի մը ծո՞րակէն ջուր կը թափես գլխիդ վրայ, լոգանք կ'ընես շարունակ, ամառ ձմեռ, գիշեր ցերեկ, և հաճ հետզհետէ կը գիրաճաս կըստուարանաս ... :

Ո՛չ, առասպել չէ այս : Ով որ օր մը Արմաշ երթայ ուխտի, պիտի տեսնէ որ ամէն առտու Արսէն վարդապետ վանքին ախոռը կը մտնէ, հոն խոշոր տաշտի մը մէջ մօրէմերկ կը տեղաւորուի, և վերը առաստաղին մէջ եղած ջրամանի ծո՞րակէն վազած ջրի հոսանքով կ'ողողուի կը լուացուի, լոգանք կ'ընէ, տաշտին մէջ փռուելով լողալով սողալով սուրելով սաղմոսելով :

Զայ՛ Տեառն ի վերայ ջուրց բազմաց :

Եւ Տէր փառաց ինքնին որոտաց :

Լուացից սրբութեամբ դձեռս իմ,

Եւ չուրժ եղէց զսեղանով քով Տէր :

Յետոյ, Արսէն վարդապետ սաւանի մը մէջ փաթթուելով պլլուելով և զլուխը բարակուկ չղարչով մը ծածկելով, բարձրաձայն կը կարդայ Ոսնայուայի աւետարանը, Պետրոս բառը Արսէնի փոխելով. «Ասէ Արսէն ցՅիսուս, ոչ զձեռս իմ միայն լուանայցես այլ և զոտս իմ և զգլուխս : Եւ ասէ Յիսուս յԱրսէն...» :

Բայց որովհետեւ չկայ անտրտմախառն ուրախութիւն, օր մը տիրացու Սուրէն՝ այժմ եղիլէ վարդապետ Դուրեան, որ Դպրեվանքի ամենէն խելօքիկ աշակերտներէն էր, մեկ տեղեկով իր միւս ընկերակիցներուն հետ, գաղտուկ առաստաղէն տախտակ մը քակելով, ջրամանին մէջ մեկան կը թափէ կը խառնէ, տախտակը նորէն տեղը կը դափէ, և երբ Արսէն վարդապետ վարէն ծո՞րակը կը քաշէ և մեկանի հոսանքով կ'ողողուի, կը պոռպոյ. «վայ ինձ, սեւացայ, կորայ, կործանեցայ» :

Ուր ուրեմն Արսէն վարդապետ սաւանով փաթթուած և երիզապինդ վարչամակով պլլուած, տաշտէն ու ախոռէն դուրս ցատկեց և վազեց նետեց ինքզինքը ագարակի ձորը, հոն քառասուն օր ու քառասուն գիշեր ջրի մէջ լոգացաւ, լոգացաւ, լուացուեցաւ, մինչեւ որ սրբուեցաւ մաքրուեցաւ և նորէն ձեպ-ձերմակ եղած վանք դարձաւ և «պղծեալ տաճար» կարդալ տուաւ Աղջիկ-Մինասի, որ պէսզի անգամ մ'ալ այսօրինակ դիւային փորձութեան չհանդիպի :

ՎԱՀԱՆ ՎՐԴ. ՏԷՐ—ՄԻՆԱՍԵԱՆ

ԲՈՒՐԱՍՏԱՆ

Մասիսի «Բուրաստան»ը կը նուիրենք, այս անգամ, ոտանաւորներու հատորիկի մը, Գեյսեմանի, որ վերջերս լոյս տեսաւ Յ. Մատթէոսեան տպարանէն : Կրօնային բանաստեղծութեանց հաւաքածոյ մըն է ասիկայ, գրուած Գր. Հ. Գալուստեանի կողմէ, ու սուցիլ Թարսուսի Սէնդ—Բօլ գոլէճին : Լըրադրական սովորութիւնը կը պահանջէր որ, Գրախօսականի մը կամ Քննադատականի մը նիւթ ըլլար այս նոր հրատարակութիւնը. և եթէ կը չեղինք այս սովորութենէն, պատճառն այն է որ Պ. Գալուստեանի մէկ — քանի բանաստեղծութիւնները ասիէ առաջ քանիցս երեցած են մեր «Նորերու բաժին»ին մէջ : Նորեկ մըն է, ուրեմն, ինքն ալ և ծանօթ մը մեր թերթին. ուստի հաճոյք մը պիտի զգանք մտերմաբար ողջունելով զինքը՝ Նո-

րերու շարքին մէջ : Ինքն իսկ, երիտասարդ հեղինակը, կը գրէ մեզ՝ Խմբագրութեանս ուղղած իր մէկ նամակին մէջ. — «Իբրեւ գրական շարաթաթերթի մը՝ Մասիսին շատ բան կը պարտիմ այս նախափորձիս մէջ, և ահա ճիշդ այս պատճառով լսել կ'ուզեմ ձեր դիտողութիւնները» :

Դիտողութիւններ :

Բայց ինչո՞ւ համար : Միթէ անպատճառ պէտք է դիտողութիւններու տարաքի մը տակ վհատեցնել բանաստեղծական հատորի մը հեղինակը : Այդ տխուր հարկը լաւագոյն է վերապահել այն ողորմելի ու ծիծաղելի ոտանաւորներուն որոնք սունկերու պէս կը բուսնին, տպագրական ծայրայեղ հիւրընկալութեամբ մը, այս կամ թերթերուն մէջ, երբեմն գովարանութիւններով օժտուած : Մեր մասին, եթէ կըզգուշանանք այդ անիմաստ դրուատիքներէն՝ որոնք թ, թէրգեաններու, Աղեքս. Փանոսեաններու, Մ. Աճէմեաններու յաջորդութիւնը անարժանութեան կը վերածեն, միւս կողմէ տեսակ մը վերապահում կունենանք՝ արժանիքի տէր ու ապագայ խոստացող բանաստեղծները դատափետելէ : Գնահատման ու քննադատութեան մէջ հաւասարապէս, չափը պահել գիտնալն է մեր նախամեծար ուղղութիւնը, և այդ ուղղութեամբ՝ շատ դիտողութիւն մը չունինք ուղղելիք՝ Գեքսեմանի հեղինակին : Ինքը՝ կրօնային բանաստեղծութեան ճիւղը, — կամ ինչպէս կըսեն նորագոյնները՝ «կալուածը» — ընտրեր է, և ասոր մէջ պարսաւելի բան մը չենք գտներ : Երբ լրագրութիւնը ունեցաւ իր կրօնական ներկայացուցիչը, ինչո՞ւ բանաստեղծութիւնն ալ չունենայ իր կրօնային արձագանգները : Արդէն, Պ. Գալուստեան ինքն իսկ կը փաստաբանէ իր դատը, իր «Մուտք»ի երգովը. —

Յաճախ մարդկային հոգին հիացիկ,
Դիւթուած բնութեան բիւր հրապոյրներէն,
Աղւոր թռչունէն, ծաղկէն գեղեցիկ,
Կը թրթռայ իբրեւ քնար, փափկօրէն.
Ու իր չեղտերով ներդաշնակ ա'յնքան
Կ'եղանակէ քաղցր, հնչուն, սիրական
Բնութեան երգերը . . .

Շատ անգամներ ալ երբ սիրտ — վանդակէն Սէր — թռչունը իր թևաբախումով Շարժի, խօլ յոյզեր պտուտքին տակէն, Առթելով անոր նոր աշխոյժ, կորով .
Ա'լ մագնիսացած վանկերով քնքոյշ
Կ'երգէ այնքան վարժ ու այնքան անուշ
Սիրտի երգերը . . .

Ու երբ վերանայ նիւթի աշխարհէն, Երկինքի փառքեր չլացնեն իր աչեր, Աստուած, Սէրն Անոր, երբ զինքը վառեն, Խնկի աղօթքով, հալի՜ սիրաջեր .
Այն ատեն իբրեւ երկնաւոր հրեշտակ,
Կ'երգէ Աստուծոյ սուրբ մատներուն տակ
Կրօնքի երգերը . . .

Ահա՛ նախաբան մը որ banal չէ՛ բնաւին, թէ՛ իր ոտանաւորի ձեւին տակ և թէ՛ իմաստներովը : Զուտ կրօնային չէ այս հատորը, ո'չ ալ զուտ սիրային : Բնութենէն ետքը՝ սրտի երգերը, ու անոնցմէ ետքն ալ՝ աղօթքի երգերը : Այս ուղեգիծով կընթանայ, եթէ երեք բանաստեղծ մը կրնայ ուղեգիծ ունենալ : Ու կը յաջորդեն իրարու, յիսուն երկու ոտանաւորներ, Գեթսեմանիով սկսուած, Խաչին ու Տիրոջ ուղղուած քերթուածներով շարունակուած, ու «Վերջին օրը»ով աւարտած : Լոյս կրօնաթերթին համար գրախօսականի շատ պատշաճ նիւթ մը կընծայէին այս բանաստեղծութիւնները և ընդարձակ ուսումնասիրութեան մը նիւթ ըրաւ արդէն մեր վեղարաւոր պաշտօնակիցը այս Քերսեմանին որ իր սահմանին մէջ կիյնայ :

Բայց եթէ Պ. Գր. Հ. Գալուստեան կրօնային բանաստեղծութեանց հատորիկով մը հրապարակ կ'իջնէ, ատկէ հետեւի որ շարունակ նոյն միջոցաւորին մէջ պարփակուած պիտի մնայ : Թարսուտ սուրհանդակը բերաւ մեզ, վերջին շաբթուն, դարձեալ իրմէ, ձեռագիր ոտանաւոր մը զոր առանց իր հատորին երեւումովը իր մասին եղած յանձնարարութեանն ալ, պիտի ուղէինք հիւրընկալել այս էջերուն մէջ : Ահա՛ այդ փոքրիկ բանաստեղծութիւնը . . .

Մ Ի Ր Տ — Խ Ո Ր Ա Ն Ը

Հոգիիս մէջ պաշտամունք մը անդադրում
կը կատարուի, դաշնակութեամբ մը անուշ:
Մեղեդիներն,— յիշատակն՝ սիրայուշ,—
Կ'օրօրեն զիս, մերթ յանկուցիչ, մերթ տրտում:

Խորանն ունիմ նուիրական. սիրտս է ան,
Ողջակէզը միշտ հոգեկան. «ես»ն է իմ,
Ու կրակը—մշտաբորբոք սէրս ունիմ,
Ե՛ս եմ պաշտող, պատարագող քահանան:

Պաշտամունքովս յափըշտակուած խօլաբար,
Մոռցած բոլոր հեգնութիւններն աշխարհի,
Կուղեմ ըլլալ հաւատաւոր մը բարի:

Բայց իտէալս, հեռապատկեր մ'անբարբառ,
Միշտ խոյս կուտայ հալածումովս կամովին,
Ու չեմ գտած դեռ պաշտումիս դիցունհին:

Կերեւայ թէ Պ. Գալուստեան՝ խոնկի,
խորանի, պաշտամունքի յափըշտակութիւնն
ունի, որ իր այս գուտ սիրային բանաստեղ-
ծութեան մէջ ալ անբաժան կը մնայ անոնց-
մէ, ու տեսակ մը ամօթխածութեամբ, որուն
պատճառը չենք գիտեր ու չենք ուզեր պըրպ-
տել, մինչև իսկ «սիրունի» բառին տեղ «գի-
ցունհին» կը գործածէ: Ասկէ առաջ ալ, Մա-
սիսով հրատարակուած իր մէկ — քանի ոտա-
նաւորիկները նոյն քօղին մէջ պարուրուած
էին ու կերեւայ թէ, մինչև վերջը անոնց
յատկանիւր, դրոշմը, պիտի ըլլայ ասիկայ:
Ասով բան մը չեն կորսնցներ ո՛չ հեղինակը,
ո՛չ ընթերցողը: Ընդհակառակը, պարկեշտ
ճաշակները տեսակ մը գոհացում կը գտնեն,
հաճոյք զգալով՝ առանց գայթակղելու:
«Բաց գրուածքներ»ը որոնք՝ կրկնուելով
կրկնուելով՝ ա՛լ սկսան ձփնձրոյթ պատճա-
ռել իրենց միօրինակութեամբը, տեղ մը կը
գտնեն դեռ, և տարփալից ոտանաւորները,
որոնք երբ թրթռուն ու սիրուն ձևի մը տակ
գրուին՝ կըմբոյնանաին, իբրեւ գրական ու
բանաստեղծական հասուածներ, իրենց տեղը
ունին միշտ. պզտիկ անկիւն մըն ալ պէտք
է վերապահել երբեմն հոգեչունչ ու կրօնա-
յին բանաստեղծութեանց որոնց լաւագոյն

նմոյշներէն կընծայէ Քերսեմանին: Միայն
թէ, խորհուրդ պիտի տայինք անոր հեղի-
նակին,— քանի որ անպատճառ զիտողու-
թեան մը կըսպասէ, գէթ համեստութեան
համար,— թօթափել այս հակումը, մէկ ան-
գամէն փորձելով գրիչը ցնցնել, Ու իր կրօ-
նային բանաստեղծութիւնները անջատել սի-
րայիններէն, ինչ որ արդելք մը չէ որ մա-
քուր մնան երկուքն ալ, և երբ «գիցունհին»
մը կը խօսի՝ հեռանայ խորանէն: Աշխարհա-
կան մը սա առաւելութիւնն ունի կրօնականի
մը վրայ, որ կրնայ կրօնային՝ քերթուած ալ
գրել՝ սիրայինին հետ մէկտեղ, եթէ ճաշակ
կըզգայ առ այդ, մինչ վերջինը իր տարրին
մէջ մնալու հարկադրուած է, ու չա՛տ չա՛տ

Մարի ճրագ թշուառ հոգեոյս,

(Մարի՛, ճրագ՛ թշուառ հոգեոյս)

Վաղածանօթ տաղին պէս սրամիտ գիւտով
մը կրնայ փրկել իր մէկ ոտանաւորը որ Տի-
րամօր ուղղուած չլլայ իրապէս: Բայց Պ.
Գալուստեան կրօնաւոր մը չէ և կրնայ իր
ձկուն գրիչով թռիչ տալ իր սրտին զգացումս
ներուն:

Այս առթիւ, պզտիկ յիշատակ մը գրա-
կան—լրագրական կեանքէ. ու կը վերջաց-
նենք:

Երկու տարի առաջ, Մասիսի մէջ հրա-
տարակած էինք կրօնային ոտանաւոր մը,
Արմաշէն զրկուած, եղիչ վարդապետի կող-
մէ,— այժմ Դուրեան Սրբաղանի օժանդակը
Իգմիրի Առաջնորդարանին մէջ: Թէև կարճ՝
բայց ներդաշնակ, զգայուն, գոգտրիկ բա-
նաստեղծութիւն մըն էր, զոր ուշադրութեան
առնելով Գր. Զօհրապ, սա գնահատումը
արտայայտեց առաջին տպաւորութեամբ.

— Այս երիտասարդ վարդապետը եթէ
աշխարհական մը եղած ըլլար ու այս ոճով,
այս զգացումով սիրային ոտանաւորներ գրէր,
բանաստեղծի համաւ պիտի հանէր քիչ ա-
տենին:

Եղիչ վարդապետ կը շարունակէ ոտա-
նաւոր գրել, մի՛շտ գեղեցիկ ու սահուն,
բայց միշտ կրօնային ներշնչումով: Եւ թեր-
եւս ասոր համար է որ, իրմէ նուազ արժա-
նիքով բանաստեղծական արտադրութիւններ
ունեցող աշխարհականներուն չափ անուն մը
չունեցաւ դեռ քերթողական ճիւղին մէջ:

ԾՈՎԱԿԻՆՆԵՐ

Ծովափին չորացած աւաղին վըրայ
Չէ՞ք լըսեր ծովուն երգին արձագանգ .
Յեղեղուկ հողին հոն չէ՞ առած կանգ ,
Անուրջն հերարձակ ջուրին , փախստեայ :

Իր թաւշամուայլ նիրհէն չա՛տ ասդին ,
Հոն ուր երէկ ծովն իր խանդը կուլար
Անհունին սիրոյն մէջ՝ բռնուն ու մոլար ,
Չէ՞ք տեսներ գիծերն իր մեծ հառաչքին :

Ահ , կոչտ աւաղին վըրայ լճու անգոյն ,
Չէ՞ք տեսներ Սիրոյ մեռած երգն այսօր ,
Բանդակուած խորունկ , քանդակուած հզօր
Վէտվէտուն ինչպէս խանդն ալիքներուն :

Ու այդ աւաղէ կրկնալեւան մէջէն՝
Մի՛շտ հաւատարիմ մե՛ծ Մեղեղին ,
Չէ՞ք չնչեր Սիրոյ անուրջ մը խորին ,
Չէ՞ք չնչեր հողին ալեաց որ ալ չեն :

Ի՛նչպէս նրբացեր է աւաղն այսօր .
Ոսկեփողի՛ է մեռած թիթեռնի...
Ի՛նչ ժանեկային գգուանքներ ունի
Աւաղն որ առաջ ժայռ մըն էր խոժոռ :

Ծովուն մենասարսփ սիրոյն շունչն երկար ,
Վայրի Անհունին վայելքը փնտռող ,
Անէացման մէջ , իբր անմահ մէկ դող ,
Աւաղին վըրայ դրօշմըներ է սա՛ռ :

Հոն իր հասնումի հեշտանքներն յետին ,
Խորածիլդ պատկերն հուսկ ալիքներուն ,
Անշարժութեան մը մէջ վսեմ , մի՛շտ նո՛յն ,
Իտէացուցեր են իր մեղեղին :

Ու փրփուրն աղու , ու փրփուրն հեռուն ,
Ամէն գալարուն ալիքի երազ ,
Մեռնելու ատեն , իբր անվերջ օրհաս ,
Զիւնի դալուկ մ'է սրսկեր ժայռերուն :

Ծո՛ւլ , մինչ ամէն բան որ կայ նիրհիդ շուրջ ,
Յից խարակներէդ մինչև անցորդն հէգ ,
Կը պատմէ սիրոյդ հառաչքն , ահաբեկ ,
Ակամայ կ'օրրէ քու մեռած անուրջ :

Մինչ ամէն բան հոտ , նիրհիդ շուքին տակ ,
Մի'շտ կը մռնջէ հեշտանքըդ անցեալ ,
Ծո՛ւլ , երբ քեզ նման մեռնի քերթողն ալ ,
Ո՛ւ պիտի պատմէ իր սէրն անյատակ :

Ի՞նչ դրօշմ ունի բանաստեղծին սէր
Հորիզոններուն տակ՝ մի'շտ անայլայլ .
Մինչ մէ'կ հառաչքով վիհեր գծես մռայլ
Կամ սէրդ երանող զմրուխտ կղզիներ : . . .

Միթէ հետք ունի՞ իր համբոյրը խոր ,
Խանդը նայուածքին կը տեէ՞ հեռուն .
Մինչ մէկ նայուածքով ամպեր դարձնես դուն ,
Ու մէկ համբոյրով հորիզոն մը նոր :

Միթէ արձագանգ ունի՞ իր նուագ ,
Եւ իր յանգերուն տխրութիւնն հնչուն
Կը քաղցրացնէ՞ սառ տարածութիւնն .
Մինչ քու մէ'կ շիթով կանանչնայ խարակ . . . :

Ծո՛ւլ , երբ կծկուի քերթողն ալ քեզ պէս ,
Սրտահալ , տեղոյն , հառաչքով մը լա՛յն ,
Իր մեծ Սէրն իր մէջ մարի պիտի միայն ,
Եւ շուրջն ամէն տարր պիտի լռէ վէս :

Ո՛չ մէկ բան ճանչնայ պիտի իր հուսկ հեծ .
Մի'այն փոս աչերն ըսեն պիտի ցած ,
Անհունին հզօր տեսիլքէն ծծուած ,
Մի'այն փոս աչերն , այս բառը , Սիրե՛ց :

ԵՂՈՒՍՐԴ ԳՕԼԱՆՃՅԱՆ



ԱՌՍԲԻՆՈՒԹԵԱՆ ՄՐՅԱՆԱԿՆԵՐԸ(*)

ՃԱՌՈՒ Պ. ԲՕԼ ՏԵՇԱՆԵԼԻ

Լիւսօնի ուսուցչուհին ախոյեաններ ունի իրեն. Տիկին Պօտրի, Մուշեղբոնի մէջ, որ միեւնոյն գաւառին մէջը կ'իյնայ, կը մարտնչի անխուկաւոր ծաղիկին դէմ, կը խնամէ ծերերուն կեղերը, կը ժողվէ փողոցի պղտիկ երգչուհիները: Մարի—Ան—Մուշիրու, Շաբէլ—աը—Սիւրիէօի մէջ (Իզէր), տենդի նուապայի մը մէջ ինկած հիւանդի մը պատճառաւ, երկու ձեռքերէն խեղանդամ կը մնայ: Յետոյ կուգան Պօնառ ամուսինները, Թէյ—սու—Մօն—Փօռի մէջ (Վօօ). այս երկու էակներուն մէջ, ինչպէս արիւնով, անանկ ալ բարեգործութիւնով միացած միակ անձնաւորութիւն մը կը տեսնանք. քնքշանուշ Մարի Պիյեռը, Վէժէնի մէջ (Բօրէզ). Էօօժէնի Սօրժը, Մարսէյի մէջ. ամենքն ալ փայլուն ու զօրաւոր բոցեր՝ որոնցմով թըռուառութիւնը կուգայ լուսաւորուիլ ու տաքնալ:

Լօզէռը մանաւանդ արգասանդ է յոյժ, հերոսային հունձքերով: Իր խեղճուկ լեռները սիրալի ու հոյակապ հողիներ կը կրեն. Վիքթուար Թարտիէն՝ Ծօ տը Բէյրի մէջ. Սէլէսթին Ռու՝ Սէնթ—Ալպանի մէջ. Մարի Բիժէյր՝ Մա տ'Օրսիէրի մէջ. Էլիզապէթ՝ Քօմպէթ՝ Մօնասթիէի մէջ. Սօֆի Ռու՝ Բիւպիէռի մէջ. Մարի Պուասօնտա՝ Օքսիյաքի մէջ. Բօլէթ Մէյսիէ և Տիկին Մարքօն՝ Սէվրէթի մէջ. Տիկին Պրիւթրօն՝ Նօգիէրի մէջ. և դեռ ինչ գիտնամ: Լօզէռ անաքինութեան պարտէզն է: Եւ շատ լաւ մշակուած ու խընամուած պարտէզ մըն է ան:

Բովանդակ Ֆրանսայի ամէն կողմէն, ընտանեկան առաքինութիւնները կը պոռթկան անհամար. անոնք՝ ընտանեկան երդիքներու ջերմութեան մէջ կը ծլին ու կը բողբօջին, ինչպէս հազուագիւտ բոյսեր կը ծլին ու կը մեծնան մեղմ կլիմաներու տակ. անոնք ցեղի մը կորովն ու առողջութիւնն են:

(*) Շարուհակութիւն ցախորդ թիւեմ

Ընտանիքի մը շրջանակը, որչափ ալ տարածուն ըլլայ, միշտ չափազանց նեղ կուգայ կարգ մը սիրտերու համար: Կալքէյի (Մանլի գաւառին մէջ) աղքատ մէկ կար կարողը ահա՛, Էլիզ Լըպայի, որ չորս ֆրանք աւուրչէքով մը կը պահէ, կը մեծցնէ ու դիրքի տէր կ'ընէ հինգ որբ քեռորդիներ. ահա Շարլ Բաննիէ, ուսուցչիլ Քալվատօսի մէջ, որ ինքն ալ հինգ որբեր կը հաւքէ ու կը մեծցնէ. ահա Վիլրժիւի Տըքուվրան, ուսուցչուհի Սէնթ—Էրվէի մէջ, որ պարտքի տակ կ'ընկճուի իր մայրը, իր քոյրը, իր քեռորդիներն ապրեցնելու համար. ահա Ժանն Ռալվալէք, Ֆինիսթէրցի, տանըվեց տարու որբ մնացած, որ հինգ քոյր ու եղբայր կը մեծցնէ և հօրը պարտքերը կուտայ. ահա Բարիզի մէջ, Տիկին Իպանէզ, որ չորս որբ եղբորորդի կը նայի, և Քալօ ամուսինները, որոնք բազմանդամ ընտանիքով մը բեռնաւորուած արդէն, կը պահեն նաև հինգ քեռորդիներ, ինչպէս նաև, ամէն մեղքիս վրայ, փողոցը մնացած օտար տղեկ մըն ալ. ահա վերջապէս Սէն—Ժիրօնցի Ժանն Լիքայը, ապերախ ընտանիքի մը նախախնամութիւնն ու զո՛ր միանգամայն, որուն սրտակեղեք արկածները Պրիզէօի պատմութեան մը խորհիլ կուտան:

Բայց ահա ուրիշներ, որ ընտանեկան սեւմէն դուրս խոյանալով, կ'որդեգրեն ամէն ինչ որ կուլայ, ոչ մէկ տեղ օտարական մը չեն տեսնար, և դժբախտութենէն զատ ուրիշ ազգականութիւն չեն ճանչնար. օրինակ՝ Տինանցի սա արգուկողը, Լուիզ Լըպրթօն, որ իր մեռած աչկերտուհիներէն մէկուն չորս զաւակները կը մեծցնէ:

Յետոյ կուգան խեղանդամները, անկարողները, հայմոսները, մարդկային աւերակներ, կենդանի դժբախտութիւններ ամենքն ալ, որոնք իրենց տկարութեան բերմունքով իսկ պէտք ունին ուրիշներուն ձեռնտուութեան և որոնք, հրաշիւք իմն, բաւական ուժ կը գտնան իրենց մէջը օգնութեան փութալու համար ուրիշներուն: Էնկլանքուրի մէջ, Մարի—Լուիզ Քարօն՝ որ կոյր է, կը խնամէ իր ծնողը, ինչպէս նաև շրջակայ

վայրերէն չատեցը, և իր մարած աչուըները տակաւին հուր ունին իրենց մէջ, սիրտերն արծարծելու համար: Ֆրանսուա Օպուռ, Բիէնֆիքցի խլրտորսակը, իր կտրուած սըրունքով ու օրական ութ սուով իր հայրը կը նայի: Մառի Պէլլի, Քօնֆօլէնցի, իր հայրը, մայրն ու եղբորորդիները կը սնուցանէ: Միրրուացի Տիկին Լանսո՝ աղքատ ու հաշմանդամ, երեսուն տարիէ ի վեր անձնուիրաբար կ'աշխատի հիւանդներուն ու աղքատներուն համար, կը հսկէ մենաւոր ոգեւարներու ոտքին տակ, և գերեզմաններու աւաղին վրայ: Եւ բոլորն ալ քաղցրահնչիւն բառեր ունին բուժելու համար ահաւոր լուծութիւնները, շարժուածներ ունին որոնք մեղմիւ կը կապեն ու կը քնացնեն վէրքերը, և ակնարկներ՝ որոնք շրթունքներուն եղբին վրայ կը չորցնեն արցունքներուն աղի խոնաւութիւնը:

Հասալ Ինչպէս պատմել հոս յուզիչ պատմութիւնն ամէն տարի հետզհետէ բազմաթիւ այն սպասուէիներուն, որոնք ստոյիկ արիութիւնով կը փարին իրենց տէրերուն անձկութեան, և իրենց սեպհական թշուառութենէն բան մը կը խորեն փրկելու համար զանոնք՝ իրենց զաւակներով: Ահա անոնցմէ մէկը, որ կործանած է իր տիրուէին համար. ան նորէն կուտայ անոր՝ յամբօրէն վերակազմած իր նոր խնայողութիւնները, — Ինչպէս նաև իր բովանդակ կեանքը: Ուրիշ մը, — յաճախադէպ պատմութիւն մըն է այս, — մերժած է ամուսնանալ. հեռացած, հրաժարած է ան դէպ իրեն եկող երջանկութենէն, և իր երկտասարդութիւնն ու գեղեցկութիւնը տուած է անձնուիրաբար, ծերութեան ու վիշտին ամօքումին համար: Սպասուէիներ: Այո՛, տեսլականին սպասուէիներն են անոնք, որ կը յափշտակէ ու կ'առնէ կը տանի զիրենք: Ներքին աստուծոյ մը սպասուէիները, որ կը հրդեհէ զիրենք, — կամ լաւ ևս է ըսել, սպասուէիութենէ աղատագրուածներ, ինչու որ իրենք խզած են իրենց կապերն՝ ինքզինքնին նուիրելով, ինքնաբերաբար մեռնելով:

Հիմա եկէք Բէռլի բլուրներուն ստորոտը, վաղեմի այն դղեակին վերիւր, ուրկէ Ռօք-

րուի կոմսերը, ամբողջ երկու դար, նայուածքով իշխեցին Հիւզնի ծիծղուն ծործորին վրայ: Հոն Սիւլլիի շիրիմին ու Ռէմի Պէլլօի արձանին մէջտեղը, կտրիճ անձնաւորութիւն մը, Տիկին Ֆէրրանտէն, մինչև տասը փարսախ շրջականներէն կ'ընդունի մարմինով ու հոգիով բոլոր տխրած աղեկները: Կարծես տեսակ մը Հրաշալիքներու խմբավայր է ան, Քալլօի կամ Կօեաի փառաւոր պատկեր մը: Այդ անուի դէզէն, յամբօրէն, բանականութեան ու բարոյական ըմբռնումի մասնիկներ դուրս կը բերեն իր ճկուն ու գործովու ձեռները: Օ՛հ, ի՜նչ համբերատարութիւն, ի՜նչ ճարպիկութիւն պէտք են, ընտանեցնելու համար այդ խրտուղ թռչնիկները, խաղաղեցնելու համար անոնց վայրենաբարոյ ըմբոստացումները: Մէկը զսպուելու պէտք ունի, միւսը՝ յուզուելու: Բարի կինը գիտէ դպիւր բոլոր թաքուն թելերուն: Կ'ըսեն թէ կարգ մը խաշնարածներ, կաղնենիի պարզ ցպիկով մը, կը գտնան ջուրերու ծածուկ դիրքը, որոնք կը սկսին պոռթկալ գետինէն. անոնց պէս, այս կինն ալ գիտէ արցունքները ժայթքեցնել:

Կին էակը համակ գթութիւն, ամբողջ ողորմածութիւն է: Օրհներգութեան լեզուով խօսելով, ան կը հառաչէ վիշտին համար, «Ինչպէս ծարաւ եղջերուն կարօտակէզ կը պօռայ ակերու ջինջ ջուրին համար»:

Միտքերնիդ բերէք անգամ մը Խիօսի աւանդութիւնը: Դիցուէին կուլայ կ'ողբայ իր ամուսինին համար զոր սեւամորթ Թիֆօն բըշիկ բզիկ է ըրած: Խեղճ կինը մեռեալին հոս ու հոն ցրցքնուած անդամները կը փնտռէ ու կը ժողվէ: Յանկարծ, գետինը, նորածին պղտիկ հրէշ մը: Լացող այդ տկար արարածին հանդէպ, գթութիւն միայն կը զգայ: Կ'առնէ զայն իր բազուկներուն մէջ, կը սեղմէ իր սիրտին վրայ և մեծանձնօրէն, կը կախէ զայն իր ստինքէն: Բարեգործութեան կաթը լիովի ըմպած, ու սիրոյ արցունքներով ոռոգուած, հրէշը՝ աստուած մը կը դառնայ կ'ըլլայ:

Պարոններ, էրիկ մարդոց առաքելութիւնը կրնորուն առաքելութեան չի նմանիր քնալ:

Անոնց քաջասրտութիւնն ուրիշ ձև մը կ'առնէ ընդհանրապէս, գրեթէ միշտ նուազ շարունակական է անիկա։ Այլ սակայն, հոս ալ նորէն, յարատեւութիւնն է որ կ'իշխէ մեր ընտրութիւններուն վրայ։ Մեզի առաքինի կեանք մը պէտք է ամբողջ, չէ թէ առաքինութեան գործ մը միայն։ Այս վերջին տեսակէտով, բոլոր Ֆրանսացիներն ալ առաքինի պիտի կրնային սեպուիլ, քանի որ բոլոր Ֆրանսացիներն ալ քաջասիրտ են. անոնց մէջ, էն առաջ կուգան մեր զինուորները, ու մեր նաւազները։ Քանի մը ամիսներ առաջ, երբ մեր ընդծովեաներէն մէկն ընկղմեցաւ Պիղէրթի առջև, իր երկաթապատ քանտին մէջ միասին տանելով հոն գտնուող քաջերը, Թուլոնի՝ ծովակալութիւնը, այդ կարգի նաւերու համար պէտք եղածին չափ մարդ չունենալով, կոչում ըրաւ բարի—կամեցողութիւն ունեցող անձերուն. նաւահանգիստին բովանդակ ընակչութիւնն ինքնայոթար եկաւ ներկայանալ, իբր այն արձանագրուելու համար, պերճախօս պատասխան Անկապաշտութեան կարգ մը գործիչներուն ուղղուած. հիանալի պատասխան նաեւ, ուղղուած այն կարգ մը տեսութիւններուն՝ որոնց մարդ չի գիտեր թէ ապիրատութեանը վրայ աւելի զմայլի, թէ թեթեւաբարոյութեանը վրայ։ Այսպէս ալ, բովանդակ Ֆրանսան պիտի պատասխանէր եղած կոչումին, — բաց ի հիւանդներէն, — եթէ մէկը համարձակէր ձեռք դպցնել անոր պատիւին։ Ան պատերազմը նուազ դժնէ կը դաւանի, քան հակառակորդին գործիք դառնալը։

Կ'երեւայ թէ Բնութեան հետ մօտաւոր կենակցութիւնը մարդոց հետ կենակցելէ աւելի կը նպաստէ զօրաւոր կեանքեր պատրաստելու։ Մեծ գործերը լուռ առանձնութիւններու մէջ է որ կը ծնին։ Պ. տը Պիղմարք օր մը կ'ըսէր թէ անոնք որ վարժուած են ապրելու պոքալիներու մէջ, լայնարձակ դաշտավայրի մը ազատ ու ափայի անջրպետներուն մէջ, ուր կանանչ փայտիւր կոչուած թռչուններուն կտուցի հարուածները միայն կը լսուին ծառի կոճկերուն վրայ, կ'ունենան անանկ յանկարծակիս ու խորունկ յայտ-

նատեսութիւններ որոնք չեն գտնուիր քաղաքի մը քարայտակին վրայ, կամ կանանչ սեղանին շուրջը։ Այո՛, անտառը, լեռը, ծովը, կորովի համար ընդարձակ մթերանոցներ են. կոյս տարրերուն և ուժերուն դէմ պայքարն ոչ նուազ բարոյական քաջարի կաղմուածք կը պահանջէ քան մարդկային տառապանքին դէմ մղուած մարտը։ Մանչի, Ատլանտեանի, Միջերկրականի մեր ծովեզերքները կը վըրտան հերոսներով։ Նենգամիտ ծովը հոն, ամէն կողմ, ահաւոր տարփածուններ կը գլուխայ իրեն։

Կրանվիլի մէջ, օրինակի համար, բռնաչունչ ու ալեկոծ ծովափ մը, որուն ապառաժները կ'ենթարկուին ահռելի այն ալիքներուն՝ որոնք Ատլանտեանի լեռնակուտակ բովանդակ կատաղութիւնը կը թաւալցնեն հազար փարսախ հեռաւորութեան վրայ, և Սէն—Միլէի չրջակայ աւաղներուն կեղծ կակղութեանը մէջ, մեծանձն քաջագործութիւններն անընդհատ կերպով կը բազմապատկուին ու կը կարկառին։ Այսօր նախկին նաւազ մըն է, մաքսային պահնորդներու տասնապետ մը, որ ամէն օր նոր կեանք մը կ'ազատէ։ Միշտ կաղմ ու պատրաստ, միշտ խիզախ ու անվախ է ան։ Հանդարտ՝ Բնութեան բարկութեանը հանդէպ, ան անքիթ կը դիտէ մըրիկը, ու մահը։ Երբ ծովը կ'իջնայ, ան կը վազէ կ'երթայ՝ հրդեհներուն, կ'ազատէ արեւու վրայ եղող անձերը, կը բռնէ խտչած ձիերը, կամ թափառաչրջիկները։ Բարիք ընելու յամառ մոլեգնութիւնն է աս, չարիքի բուռն մոլեկանութեան դէմ։ Իրա՛ւ է որ, մեր ծովեզերքներու և մեր նաւահանգիստներու այս մարդիկը մարդկութեան տիպարական չքեղ օրինակներ են։

Միջև ցարդ, պարոններ, անհատական գործերու վրայ միայն խօսեցանք։ Բայց, Ա. կաղեմիան, երկար ատենէ ի վեր, տարրեր բաներ ալ գնահատելու սովորութիւնն ընդգրկած է։ Դիմաօրտ անձնաւորութիւն մը իր քովը կ'առնէ լքուած տղեկ մը. յետոյ երկու, յետոյ երեք, յետոյ քսան տղեկներ. ուրիշ անձեր օգնութեան կը փութան անոր. հիմա ատիկա քանի մը հազիններու առաջ

բերած գործն ըլլալուն համար, պէ՛տք է որ մենք ալ մեր կարգին չօգնենք անոնց: Այդ պարագային մէջ է որ կը գտնուին, նոյն իսկ այս տարի, Օր. տը կրանքոնի որբանոցը, Սէն—Բօլ—տը—Լէօնի մէջ, և Պ. Բասքալի արգայնի որբանոցը, Մարտէլի մէջ:

Սկիզբները, 1782ին, մեր նախնիքացները միակ մրցանակ մը ունէին տալիք, «Բարի՛ղի կամ չըջակայ արուարձաններուն մէջ, աղքատ ֆրանսացիի մը կողմէն ի գործ դրուած ամէնէն առաքինական ընթացքին համար»: 1819ին, Պ. տը Մօնթիօն մէկ քանի մրցանակներ ևս աւելցուց անոր վրայ: 1824ին, այդ մրցանակներն ընդարձակուեցան և տարածուեցան Բարի՛ղէն զատ նաև ամբողջ ֆրանսայի և գաղթականութիւններուն վրայ: 1860ին, Ակադեմիան, առաջին անգամ ըլլալով, մրցանակի կ'արժանացնէր հաւաքական գործեր, — որբանոց մը, ու դեռատի աղջիկներու պատսպարան մը:

Անկէց ի վեր տարուէ տարի սահմանն ընդարձակուեցաւ, — Պատսպարաններ, աշխատանոցներ, մանկանոցներ, վարժարաններ, աղքատանոցներ, հիւանդանոցներ, ձրի դարմանատուններ, հիւանդապահական ընկերակցութիւններ, ծերերու, մուրաքիկներու, թափառաշրջիկներու, բանտէն արձակուած թիապարտներու համար ապաստանարաններ, կոյրերու, խուլ—համերբու հաստատութիւններ, գործ գտնալու, ծերերը հանգստեան կոչելու, աշխատութիւնով օգնելու յատուկ կազմակերպութիւններ, գործաւորական ակումբներ, ժողովրդային քարտուղարութիւններ, յետոյ մեր սահմանագլուխներէն անդին, «բարոյական մեծ անձնաւորութիւններ», ինչպէս Արեւելքի սա ֆրանսական հաստատութիւնները որոնք բաց են անխտիր ամէն ազգութիւններու առջև, և արտասահմանի բարեգործական ֆրանսական ընկերակցութիւնները, կամ վերջապէս Բասթօրեան հաստատութեան պէս համազգային կազմակերպութիւն մը: Մէկ քանի տարիներ առաջ, նոյն իսկ հոս, մեր մեծանուն պաշտօնակիցներէն մէկը սապէս կ'աղաղակէր. «Այս օրերս պիտի տեսնաք որ մրցանակ

պիտի տանք նաև արհեստաւորական լաւագոյն սէնտիքաին»: Իրաւունք ունէր, ինչու որ երկրագործական նմանօրինակ սէնտիքա մը մեր դարաշրջանին հրաշալիքներէն մէկն է: Մնաց որ, նուիրատուութիւնները, իրենք իսկ, կը հետեւին բարքերու շարժումին և ուղղութեան: Ահա մրցանակ մը «բարիքը քաջալերելու համար», մրցանակ մը «բարի գործքերը վարձատրելու համար», ուրիշ մը՝ «մրցանակներու կարեւորութիւնը շեշտելու համար», կամ «մարդասիրական գործերը նպաստաւորելու համար»:

Արդարեւ, բարի գործ մը, հաւաքական գործողութիւնով մը բազմապատկուած ըլլալուն համար, նուազ արժէքաւոր չըլլար, ոչ ալ իբր օրինակ մատնանշուելու նուազ արժանի: Ընկերակցութիւնն աւելի մէթոտ, աւելի գիտութիւն կը դնէ բարիքի կիրարկութեան կերպին մէջ: Ան մէկ հարուածով կրնայ քսան, հարիւր բարի գործ մէկանց կատարել: Բարիքն ալ ունի իր կատարելագործեալ զէնքերը:

Եւ այլեւս մի միայն անցեալ բարեգործութիւնը չէ որ կը ցուցադրենք ու կը վարձատրենք, այլ ապագան ալ կը պարտաստենք. մենք ներկայ մարդկութեան օգնելով հանդերձ, կ'օգնենք նաև այն մարդկութեան՝ որ գոյութիւն չունի դեռ ևս, և որ սակայն խղճմտանքին նայուածքին առջև միեւնոյն իրաւունքներն ունի:

Այսպէս, ատենով, էականապէս անհատապաշտ դարու մը մէջ այնչափ քննադատուած գաղափարը, տակաւ տարածուած ու լայնցած է ընկերակցութեան դարու մը աղղեցութեանը տակ: Ան՝ մեր հայրերուն կարծածէն շատ աւելի բեղմնաւոր եղած է, կամ գէթ տարբեր ուղղութիւններու մէջ արգասաւորուած է. ան՝ յարմարած է նոր ժամանակներու պէտքերուն, բարեգործական անանկ ձեւերու՝ զորս մեր հայրերը չէին կրնար կանխագուշակել, բայց որոնք ոչ նուազ կը լրացնեն իրենց բաղձանքները և կ'արդարացնեն մարդկութեան վրայ ունեցած անոնց վեհ հաւատքը: Մասամբ դեղնած հին պսակը կը դաւարի կրկին և նոր ծիւեր կ'արծակիէ:

(Շարունակելի) Թարգմ Չիֆթէ-ՍԱՐԱՅ,

մէն վերջ, հանդիստ և խաղաղ միտքով անոնց վրայ խօսիլ եւ դատողութիւններ ընելը՝ մտքերու և սրտի ամէն տեսակ նեղութիւնները կը փարատեն և հետեւպէս քուէն ալ չի խռովիր։ Մինչդեռ խել մը, կեղծ և սիրոյ վրայ կամ լկտի վէպերու ընթերցումը, կը յոգնեցնէ մեր թէ մարմինը և թէ ուղեղը։

Այդ եւրոպական վիպասանութիւններէն և նկարագրութիւններէն ինչ բարոյական օգուտ կրնանք քաղել, որոնք մարդու թէ՛ իմացականութիւնը, թէ սիրտը և թէ առողջութիւնը ապականելէ ուրիշ բացուցական յատկութիւն մը չունին։

Ասկէ առաջ գրած յոդուածներու մէջ կրկնած էի թէ մարդ իր պարապոյ ժամերը բնութեան ծոցին մէջ պտտելով անցունելը օգտակար է։ Այս դիւրին խրատին ուշադիր եղիք, ազնիւ ընթերցողներ, ըստ որում պիտի հասկնաք թէ ի՞նչ մեծ օգուտներ կը քաղէ մարդս երբորայս մարդանքն ընէ։ այս տեսակ կրթութեան մը մէջ թէ՛ ուղեղը եւ թէ մարմինը կը շահին։ Պտտելու ժամանակ լաւ քննեցէք տեսած տառնկերնիդ, որովհետեւ անոնցմէ ոմանք, մեր սնունդին, շատերը՝ մեր հիւանդութեան, և ուրիշներն ալ մեզ անուցանող անասուններուն իրրեւ կեր կը ծառայեն։

Միեւնոյն օգուտն ու զուարճութիւնները կրնաք քաղել, միեւնոյն դիտողութիւնները ընելով այն զանազան տեսակ անասուններուն վրայ։ Տեսած էք անշուշտ, գիւղաբնակ ընթերցողներ, պտտելու ատեննիդ թէ, եղ մը, դաշտին մէջ ասղին տնդին գլուխը հակած խոնարհաբար և հանդարտ խտերը զատելով կ'ուտէ՝ տղու մը կամ շատ հեղ կնկան մը առաջնորդութեամբ։ Դեռ արտոնէն դուրս չելած, առաւօտուն օրական կաթը կուտայ և դաշտին մէջ ժուռ եկած ատեն մեր անդեան անյարմար, լեղի խտերն ուտելով միւս օրուան տալիք սովորական կաթը կը պատրաստէ։

Բնութեան մեզ ներկայացուցած այս չքեղ եւ սքանչելի տեսարանէն զգացած ուրախութեամբ լեցուած, վերադարձին

անձկանօք պիտի բանաք կարգալ այն գիրքերն՝ որոնք կը պարունակեն ինչ որ բնութեան մէջ կայ ու կ'ապրի։ Անոնցմով պիտի սովորիք թէ ի՞նչպէս անասուններէն շատերը կ'ապրին եւ կը խնամեն իրենց կեանքը։ Ի՞նչպէս կը շինեն այն խառն՝ բայց սիրուն բնակարաննին և մանաւանդ ձմեռուան համար պատրաստած կերակրոց համար ի՞նչպէս կը յոգնին ու կ'աշխատին։ Պիտի սովորիք, օրինակի համար, թէ անտառներու մէջ բնակող սկիւռները, այն համեստ ու փոքր կենդանիները, ի՞նչպէս ամառ ատեն ընկոյզ, կաղին և նուշ ժողվելով կը պահեն՝ իրրեւ ձմեռուան պաշար։

Ուստի ընթերցասէր ըլլանք, օգտակար գիտելիքները սորվելու համար, երիտասարդութեան ժամանակ աշխատելու է, զի աս սով է միայն որ մարդ իր առողջութիւնը ապահովցուցած կ'ըլլայ՝ մտային խաղաղութեան եւ մարմնական հանգստաւէտութեան համար պէտք եղածը սկիզբէն հոգացած ըլլալով։

Ո՛րչափ օգտակար նիւթեր եւ հրաշալի տեսարաններ կը գտնենք Բնութեան մէջ, եթէ մեր խելքը, միտքը, ուշադրութիւնը Բնութեան մեզ պարգեւած հրաշալիքներուն վրայ դարձնելու ըլլանք, եթէ շարունակ կարդանք այն Մեծ Գիրքը՝ որ ամէն օր, ամէն վայրկեան մեր աչքին առջեւ կայ եւ պիտի կենայ միշտ եւ յաւիտեան, եւ ամէն ոք կրնայ զայն դիւրութեամբ կարդալ եւ հասկնալ, այն ատեն մարդ աւելի երջանիկ պիտի զգայ ի՞նչքինքն՝ Բնութեան մէջ անցած դարձածները հասկնալով եւ սովորելով, ինչպէս շատ իրաւամբ ըսած է ժամանակին ալ Տոքթ. Թէսըռօ, փրանսացի երեւելի առողջաբանը։

ՏՕԲԹ Տ. ԱԼԼԱՆԿԵՐՏԻ ՈՐԴԻ



ԽՄԱՐԱԳՐԱԿԱՆ ՆՈՐԵՐ

Յաւով կ'արձանագրենք մահը Տոքթ. Գաբրիէլ փաշա Սեւեանի, որ երկար ժամանակէ ի վեր անկողնի կը ծառայէր: Հանգուցեալը պետական հայ պաշտօնատարներու և բժիշկներու շարքին մէջ ծանօթ և յարգուած դէմք մըն էր և ժամանակակիցը եղած է Տոքթ. Սերվիլէն էֆ.ի, Բարունակ պէյի, Ռուսինեանի: 1823ին ծնած ըլլալով, կը մեռնի 83ամեայ հասակին մէջ: Կայս. բժշկական վարժարանը յաճախող առաջին հայ ուսանողներէն մէկը եղած է, 1843ին, և իր վկայականը ստանալէն ետքը՝ զնահատուելով իր կարողութիւնը, բժշկական կարեւոր պաշտօններու կոչուած է յաջորդաբար, նաւային բժշկութեան ճիւղին նուիրելով ինքզինքը: 1892ին բարձրացաւ Լիվայութեան աստիճանին: 1897ին հանգըստեան կոչուեցաւ, իր ծերութեան ու հիւանդութեան բերմամբ, բժշկական գործունէութեան բազմամեայ ու արդիւնաւոր ասպարէզ մը բոլորելէ ետքը:

Տոքթ. Սեւեան փաշա զբաւարարէր ու զբարբարեան մը ըլլալով, պահ մը զբաւանասպարէզին մէջ ալ երեւցաւ, իբր 1886էն մինչև 1893ի միջոցները: Առաջին անգամ աշխատակցեցաւ «Ճաշակ ոսկեղէն Դպրութեան» Հանդէսին, զբաւար յօդուածներու և թարգմանութիւններու շարքով մը. յետոյ, «Տաղեր» վերնագրին տակ՝ իր երբեմնի բանաստեղծութիւններէն նմոյշներ հրատարակեց Յ. Գուրգէն էֆ.ի Պատկերին և Արեւելի մէջ: Այդ միջոցներուն էր որ, ժամանակակից զբաւանութեան ու ընթացիկ աշխարհաբարի դէմ իր խիստ քննադատութեանցը բերմամբ, ի պաշտպանութիւն զբաւարի, բուռն բանավէճի մը բռնուեցաւ օրուան զրադէտներէն ոմանց հետ:

Իր դեռատի որդւոյն՝ Վահէի վաղահաս մահուան յաջորդելով իր կնոջ մահը, Տոքթ. Սեւեան փաշա այս կրկնակ սուգերէն խորապէս զգածուած՝ կեանքին վերջին տարիներուն մէջ ինքզինքը նուիրած էր իր թոռնե-

րուն խանդաղատանքին ու լեզուաբանական ուսումնասիրութեանց: Ժամանակէ մը հետէ հիւանդութիւնը սաստկացած ըլլալով, ծերունի բժիշկը կը մնար գրեթէ զգայազիրկ վիճակի մէջ:

Տոքթ. Սեւեան փաշա կը թողու երկու զաւակ, Սրապ էֆ. Սեւեան՝ որ Ռէժիի վարչութեան Պաշտատի ճիւղին մէջ կարեւոր պաշտօն մը կը վարէ, և Ռուբէն էֆ. Սեւեան որ այստեղ, Ալալէմճեան վաճառատան մէջ, գլխաւոր համարակալի պօստօն ունի, և ուրոնց կը յայտնենք մեր ցաւակցութիւնները:

Մեր ցաւակցութիւնները կը յայտնենք նաև Մանգուլսէի Էմֆեաբ լրագրոյ Տէր և Տնօրէն Յովհաննէս էֆ. Գայսէրեանի ու եղբորը՝ Գրիգոր էֆ.ի՝ այս վերջնոյն դեռատի զաւակին, Եղուարդ Գ. Գայսէրեանի վաղահաս մահուան առթիւ: Վաղամեա պատանիին յուղարկաւորութիւնը կատարուեցաւ չորեքշաբթի օրը, Սկիւտարի Ս. Քաջ եկեղեցին, համակիր ցաւակցութեանց արտայայտութիւններով:

Արմենակ էֆ. Յնտգլեանի կաղմակերպած ձայնական և գործիական երաժշտութեան ցերեկոյթը, Իւնիօն Յրանսէզի սրահին մէջ, համակիր ընդունելութիւն մը գտաւ: Երկսեռ հանդիսականներու ընտրեալ բազմութիւնը որ լեցուցած էր այդ սրահը, կիրակի օր, գեղարուեստական վայելքի մը տպաւորութեան տակ մեկնեցաւ: Յնտգլեան էֆ. իր ախորժալուր ու կրթ ձայնով երգեց գեղեցիկ ու դժուարին կտորներ՝ մեծ երգահաններու հեղինակութիւններէն, դաշնակի ընկերակցութեամբ զոր կ'ածէր Պ. Սէլվէլի: Նուադահանդէսին փայլը կ'աւելցնէր Պ. Հէկէի՝ ծանօթ դաշնակահարը, իր մասնակցութեամբ: Կը խնդակցինք Արմենակ էֆ. Յնտգլեանի՝ որ արուեստագէտի կրկնակ յատկութիւններով օժտուած երիտասարդ մըն է, իբրեւ երգիչ ու նկարիչ միանգամայն, իր սարքած Նուադահանդէսին գտած յաջողութեանը համար:

Հիմնադիր—Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Տէր ԷՆ ՏԵՐԿԵ—ՏՈՔԹ. ԵՂՈՒԱՐԴ ՄԱՍԻՍ

Տպագրութիւն ԱՐԵՒԵԼԻՔ ՕՐԱԳՐԻ

CAISSE PATERNELLE

ՔԷՍ ԲԱԴԵՌՆԵԼ

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԻՄՆԵԱԼ Ի ԲԱՐԻՁ 1841 ԻՆ

ԿԸ ԳՈՐԾԷ ՅՐԱՆՍ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀՊԿՈՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱԿԱԿՇՈՒՆ ՏԱԿ

Սկիզբէն ի վեր ապահովագրեալներու եղած վնասում 300 միլիոն ճր.
Սկիզբէն ի վեր արձանագրեալ ապահովագրութիւն 700 միլիոն ճր.

ԸՆԹԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԻ ՖԲ. 85,000,000

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ ԵՒ ՊԱՀԵՍՏ

62,750,000

Ուրեմն ընթացիկ ապահովագրութեանց դուրսին վրայ պահեստի համեմատաւ թիւնն է 74% օրով ՔԷՍ ԲԱԴԵՐՆԵԼԻ ընծայած երաշխաւորութիւնը գեր ի վեր կը հանդիսանայ ուրիշ ընկերութեանց ցոյց տաւած երաշխաւորութիւնէն:

Ընկերութեան վարչական խորհուրդը կողմուած է Յրանալի ամէնէն նշանաւոր դրամատէրներէն. ինչպէս

Մ. ՌԸՆԷ ՊՐԻՍ, Արեւմտեան Յրանալի երկաթուղեաց ընկերութեան եւ Գրէտի Լիօնէի վարչական խորհուրդի անդամ.

Մ. ՄԱՐԲԻ ՏԸ ՖԼԵՌ. Դրանալի անդիք ընկերութեան վարչական խորհուրդի անդամ.

Մ. ԿՈՄՍ ՏԸ ՍԷՆ ԿԻԼԷՄ, նաեւ կին գանձապահ.

Մ. Օ. ՄԱԶԸՐԱ, Ընդհ. Տնօրէն Բաժնի Լիօնէի.

Թուրքիոյ Տնօրէն Գ. ԱՍՏՈՒԱՇԱՏՈՒՐ Պալիս, Սուլթան-Համամ. Բասաժ Բաթրընքուլու

Ընկերութեան վրայ տեղեկութիւն առնելու համար դիմել Բաժնի Լիօնէի.

ԾԱՆՈԹ.— Շահաւոր դիմել պիտի տուի այն ֆնիլիան որ կարեւոր արգիւնք մը իր ագործած քլայ աճանապէս:

5—10

ԱԴԱՄ ՎԱՐԴԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ամեն ճեսակ քօհաֆիյէ ապրանց

Մեծ—Շուկայ, Գիւրգէններու դրան կից, Բ. 41—43

Նոյնպէս, ալ այդ եւ կանանց ճաշակաւոր հովանոցներու վաճառատուն, Պալիս, Սուլթան—Համամ, Միտիլի Դրամատան դէմ թիւ 58:

Սոյն երկու վաճառատուններուն մէջ գտնուած ապրանքները, թէ՛ քօհաֆիյէի վերաբերեալ եւ թէ՛ տրանց ու կանանց յատուկ հովանոցներ, իրենց գեղեցկութեան կը միացնեն առեւտրութիւն, եւ դիւրամատաւիլի գիններու առեւտրութիւնն ալ կ'ընծայեն հասարակութեան:

Աղաժ վարդեան մեծապէս գին Թողնալով է ինչ որ իրենց լաւագործները:

պէտք է որ Շուկայ ելլող ամէն ընտանիք այցելէ անգամ մը այս երկու վաճառատունները՝ եղանակին պէտքերը հաշուելու համար:

5—10

ՏՕՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՑ ԹԻԻ 12

Ամէն տեսակ ներքին հիւանդութիւններէ զատ, մասնագիտաբար եւ երկար տարիներէ ի վեր կը դարձանէ ստամոքսի, ուղեաց, միզային ճանքաներու հիւանդութիւնները, ջղային տկարութիւնները, հիւս եւ նոր գտնուած տեսակները: Այս վերջին տեսակները՝ առանց ստամոքսի խանգարման եւ նորագոյն մեթոտներով կը բուժէ կործ միջոցի մէջ:

Հիւանդ կոչուելի ամէն օր կէս օրէ Զորեքը Զորեքը օրերը միայն ձրի: 5—10

PHOENIX ASSURANCE L Co.

“ՖԻՆԻՔՍ”



ՀԻՄՆԵԱԼ Ի ԼՈՆԾՈՆ 1782 ԻՆ
ՆԸ ԳՈՐԾԷ Ի ՊՈԼԻՍ 1869ԴՆ Ի ՎԵՐ
ԱՆԳԼ. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.

Դրամագլուխ եւ պահեստի դրամ

• Անգլ. ոսկի 4,218,000

Ֆինիքս սոսկ հրդեհի դէմ Ապահո-
վագրողն է, Ընկերութիւն մըն է, ծանօթ
իբ պատուաւորութեամբ եւ վնասուց մէջ
իբ անմիջական վնասուցներով:

Ֆինիքս կ'ապահովագրէ հրդեհի եւ
կայծակի դէմ ամէն տեսակ անշարժ եւ
շարժուն ստացուածք, յոյժ. նայաստաւոր
այլմաններով:

Ընկերութեան նշանաբանն եղած է.
ՈՒՂՂԱՄՏՈՒԹԻՒՆ Եւ ԱՆՄԻՋԱԿԱՆ
ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ՎՆԱՍՈՒՑ: Յարդ վնա-
սած է առաւել քան 27,000,000 անգլ.
ոսկի:

Ընդհ. գործակալ Պօլսոյ եւ գաւա-
ւաթ: Գ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

Վերալիս խան, Պանֆ Օբոմանի վո
Ղալաքիա:

Փօխ դործակալք Ի Պօլիս

ԹՈՒՐ. ԱՐԻԿԵԱՆ ՃԻՎԱՆ ԹԵՔԵԱՆ

Էմիք պէյ խան Ֆեսզիւսն իսսն

Ջենիշ Բիզգերու

3-10

Ա. ԷՆՔՍԷՐՃԵԱՆ

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐՍ, ՄԵԾ ԳՈՂԱՅ ԹԻՒ 200

Կալաթա-Սէրայի Լիսէին դէմ

ԳԵ. ՆԵ. ՇԲ. օրերը առաւօտեան կանու-

խէն մինչեւ իրիկուան ժ. 11 1/2

ԲԵ. ԴԵ. ՈՒՐ. օրերը ճեմ մինչեւ 11 1/2

Կիրակի օրերը ժամադրութեամբ 2-10

ՑԱՄԱՔԱՅԻՆ ԵԻՐՈՊԱՅԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՊԱՀ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ՎԻՔՏՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՄԷՆ ԴՐՈՒԹԻՒՆ ԿԸ ԳՈՐԾԱԴՐԷ

Ունի կեանքի, օժիտի, արկածի, ցման թուակի միւղեր
VICTORIA ՎԻՔՏՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ կեանքի ապահովագրութիւններ ունի թէ'
DE բժշկական քննութեամբ եւ թէ առանց բժշկական քննութեան
BERLIN Առանց բժշկական քննութեան եղած կեանքի ապահովագրութիւնն-
բուն վնասուցները շարաթական մասնավճարներու աւելի կուենան,
սկսեալ 5 դրուշէն

Ապահովագրեալ գումար 1904ին Ֆր. 1,491,279

Պահեստի դրամ 1904ին » 695,718,000

Հաստատուած 1853 սեպտ. 20ին ար-
քայականըմարտակով եւ ուղղակի
կառավարութեան հսկողութեան ներ-
քել:

ԸՆԿ. ԴՐԱՄԱՏՈՒՆՆԵՐԸ

Օսմ. Կայս Պանքա
եւ Քրէտի Լիոնէ

Լիազոր Ընդհ. Ներկայացուցիչ

Ա. Կ. ԼԻԻՋԷՆԱ

Կալաթա, Պերեքէր խան

Օրիանդ-Պանքի դէմ

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԿԱՆ ԸՆԿ
ՀԱՍՏԱՏԵՍԼ Ի ԲՄԻՁ 1828-1829

Հ Ր Դ Ե Հ Ի Զ Ի Ի Ղ

Մինչեւ 1902ի վերջը հատուցեալ փասք	274,000,000	Ֆր.
1902ին գանձուած ապահովագրին	24,000,000	»
Դրամագլուխ երաշխաւորեալ	119,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	21,500,000,000	»

Կ Ե Ն Ա Ց Զ Ի Ի Ղ

Մինչեւ 1902ի վերջը հատուցեալ փասք	129,000,000	Ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	272,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	158,000,000	»
1092ին գանձուած ապահովագրին	12,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիոն»ի ապահովագրելոց կ'ընծայեն հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ՁԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղջեալ գիներով: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերադանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան: պայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիոն ապահովագրողք Ձերժ են այն վնասներէն եւ յուսախաբութիւններէն, որոնք կենթարկուին միշտ այն անձինք, որ ջանաբաժիններու բարդման (accumulation des bénéfices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դրութեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան դրամասունքն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆՔԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Պոլիս, Սուլթան Համամ, Բասաժ Քաթրէն Օղլու

Մասնաճիւղ Ղալաթիա, Ինայէթ Խան: — Գործակալութիւնը Թուրքիոյ զինուոր քաղաքաց մէջ

7-10

ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԵՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵՍԼ ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԸՆԿ.

Հրդեհի եւ կեանքի (Ի ՎԻԷՆՆԱ)

ՊԱՏՈՒԱԿԱՆ, ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ. ԳՈՒՐԲՍ ԼՈՒԻ ՏԵ ՊԱՎԻԷՌ

ԼԱ ԷՍԹՐԷՅԵԱ

Ապահովագր. Ընկ. ընդգեմ հրդեհի եւ ծովային անվտանգութեան (Ի ՄԱՏՐԻՏ)

Ապահովագրութիւնք կը կատարուին լաւագոյն պայմաններով:

Յոյն ընկերութեանց Դրամաւորն է Ի Կ. Պոլիս, Բոքսի Լիօնի

Ընդհ. եւ լիազօր ներկայացուցիչ Թուրքիոյ

Գ. ՅԵՐԱՏԵԱՆ

Գրասենեակ, Պոլիս, Ալեքսան Խան,

6-10

ԱՌԻԹԵՆ ՕԳՈՒՏ ՓԱՂԵԼ

Վ Ա Ճ Ա Ռ Ա Տ ՈՒ Ն

Հ Ե Ր Ճ Ա Յ Ի



ԱՊԱՌԻԿ ԵՒ ԿԱՆԽԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

Հէրճաթի վաճառատունը՝ գահարդէններու, սփի եւ արծաթ շղթաներու, գրպանեւ, պատի եւ քօնօթի ժամացույցներու մասնաւոր վաճառումէն զատ, իր բազմաթիւ յօժարեղներուն վաճառութենէն քաջալերուած՝ այս առջամ կը փութայ յաւարտել թէ մէն եղանակի յատուկ վերջին նորաձեւութեան վրայ պատրաստ ունի արանց, կանաչ եւ աղաթի համար ամէն տեսակ հագուստներ ու անձրեւի համար մուշամպա վերաբեւներ, նաեւ ձերմակողէններ, ֆաթիկներ եւ թօփէներ ու ամերիկեան կօշիկներ, Ունի նաեւ կակիւրաթի, ձէղումի լամպաններ, մանձակալներ, եւրօպական ու անգլիական գիրքեր, գետնի մուշամպաներ, կրամօֆօններ ու պիտիքլէթներ՝ ամենավերջին հաւարելու թիւներով:

Հէրճաթի վաճառատունը իրականացնո ւ լայնօրէն շահած է հանրութեան վստահութիւնը եւ գոհունակութիւնը իր արածքներուն անուանութեան եւ սփիներու մօքթութեան, ձեւաւորութեան եւ արժանութեան համար:

Այս ամէնուն տքշեալ արժէքին վաճառումն է

ԱՊՐԱՍԱՌԻԿ

Միայն թէ զնա ան ապրանքին հարիւրին 20ը հաւիտի, իսկ մնացեալ գումարին համար շաբաթական հարիւրին 5 վճարմամբ պատրաստ է հալթայթիլ:

Վաճառատունն հաստատուած է

ՄԵՄ-ՇՈՒԿԱՅ, ՈՍԿԵՐՉՈՅ ՄԵՄ ՓՈՂՈՅ ԹԻԻ 13

Այս առջամ քաջալերել բաւական է համազուելու համար թէ՛ Հէրճաթի անմրցելի կողմակերպութեամբ մը ի վիճակի է արտօս գահարդէն իր ամէնէն դժուարեան յօժարեղները: Կանխիկ գնողներու նամար հալթիւրին 5 զեղչ:

Սակարկուիլին չկայ:

Շաբաթական վճարմանը համար հաւաքընէն միշտ պատրաստ են:

3—10



ՌՕՍԻԱ-ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



ՀՐԴԵՂ, ԿԵԱՆՔԻ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ ԱՐԿԱՄԻՔ

1881 մարտ 20ի Կայս. Ուղտգով արտօնուած

Կեդրոնատեղին Բեդերսպուրկ, իրեն յատուկ չէնք

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութեան կ'ընդունի ԿԵԱՆՔԻ վրայ, եւ ՀՐԴԵՂ, ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱԳՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱՄ. ՆԵՐՈՒ ԴԷՄ, ցկեանս ապահովագրութեան ՇՈՐԵԿԱՌՔՈՎ ԵՒ ՇՈՐԵԿԱՌՔՈՎ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԵԱՆ ԱՐԿԱՄՆԵՐՈՒՆ ԴԷՄ, ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ ԿՈՍ. ԲՈՒԼՈՒՆ զէմ:

Ընկերութեան դրամագլուխը, ամբողջապէս վճարուած
Երաշխատութեան գումար աւելի քան

10,666,666 ֆրանք
149,852,000 *

Ընկերութեան ապահովագրողներուն վճարուած դրամագլուխ եւ վնասուց հատուցում

355,840,000 »

1903 տարւոյ մէջ գանձուած ապահովագրին եւ սոկոս

64,553,800 »

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ազարեան
խան, Վոյվոտա, Ղալա թիւ, 9—10